ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՇԱՀԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՐԱԳԱ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 հոկտեմբերի 2017 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այլ ինձ քաւլ լիցի պարծել,
բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»
(Գաղ. Զ. 14):

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Այսօր խաչի տոներից մեկն է Հայ Եկեղեցում: Անցնող ամիսներին հիշատակեցինք խաչի տոներ, որոնք ընդհանուր էին քրիստոնեական ողջ աշխարհի համար, բայց այսօր միայն հայկական ավանդությանը հատուկ Վարագա Ս. Խաչի տոնն է. Է. դարի կեսերին հաստատված մի հիշատակություն, որի հիմքը Վարագա լեռան վրա Ս. Հռիփսիմյանց կույսերի կողմից թաքցված Ս. Խաչի մասունքի հայտնությունն էր: Ճիշտ այն ժամանակ, երբ Հայաստանը երկու գերտերությունների՝ Բյուզանդիայի եւ արդեն հզորացող Արաբական խալիֆայության միջեւ էր, հայտնվեց խաչը՝ իբրեւ փրկության եւ հույսի նշան: Այդ շրջանից մեր Տոնացույցում հաստատվեց Վարագա Սուրբ Խաչի տոնը՝ իբրեւ հայ ոգուն եւ հայ եկեղեցական ավանդությանը բնորոշ հիշատակություն: Այսօր Վարագա Ս. Խաչի տոնին մատուցվող Ս. Պատարագի ճաշու ընթերցումները եւս խոսում են Խաչի խորհրդի մասին:

Քիչ առաջ լսեցինք Պողոս առաքյալի՝ նշանավոր դարձած խոսքերը, որով նա կարեւորում ու վերարժեւորում է խաչի տեղը քրիստոնեական կյանքում: Ո՞վ ավելի լավ, քան Պողոս առաքյալը, կարող է ասել՝ «...իմ

կյանքում պարծենալու միայն մեկ բան կա՝ Տիրոջ Խաչը»: Տիրոջ առաքյալը, իր երկնավոր Վարդապետի նման, անցավ աշխարհի մի ծայրից մյուսը, քարոզեց, բանտարկվեց, ալեբախության ու փոթորկի ենթարկվեց, չղթայակապ գերեվարվեց, մինչեւ մահ վկայեց Քրիստոսի Ավետարանի եւ խոսքի մասին: Եվ ուրեմն, կրկնեմ՝ ո՞վ ավելի լավ, քան Պողոս առաքյալը, կարող է իր ապրած ողջ կյանքը նույնացնել իր անցած ճանապարհի հետ, որ է՝ խաչը:

Մեզ համար խաչը դարձել է քրիստոնեության ամենակարեւոր եւ ամենատեսանելի նշանը: Խաչն առկա է գրեթե ամենուրեք, որտեղ բնակվում են քրիստոնյաներ: Աշխարհի բազմաթիվ կրոններ ունեն մերձավորին ու հայրենիքը սիրելու, բարություն եւ արդարություն գործելու նույն գաղափարներն ու սկզբունքները, ինչ քրիստոնեությունը: Միայն մեկ բան կա, որ թերեւս բացակայում է այս կրոններում. խաչը՝ քրիստոնեական կյանքի, զոհաբերության ու սիրո գերագույն դրսեւորումը, որ Քրիստոս տվեց մեզ իբրեւ օրինակ եւ վերջակետ Իր երկրավոր կյանքի ու վարդապետության: Ուրեմն՝ մեզ համար առավել քան կարեւոր է հասկանալ եւ ըմբռնել Պողոս առաքյալի այս խոսքերը, որովհետեւ այսօր խաչի խորհրդի լույսի՛ ներքո ենք հավաքված:

Սիրելինե՛ր, խաչը մեզ՝ քրիստոնյաներիս համար, նախ եւ առաջ բացում է հաղթանակի հնարավորության ճանապարհը: Շատ ենք տրտմում, երբ, մեր կարծիքով, Աստված կամ կյանքի հանգամանքները մեզ կանգնեցնում են երբեմն անելանելի իրավիճակի առջեւ. հարազատների կորուստը, մեր նյութական անապահով վիճակը կամ պարզապես սիրելիների կողմից վիրավորանքները մեզ չարացնում են՝ կյանքը հաճախ վերածելով իսկական դժոխքի: Եվ ահա խաչն է ցույց տալիս, որ կյանքում, բացի մարտահրավերներից ու անարդարություններից, կա նաեւ հաղթանակի ճանապարհ՝ դրանք հաղթահարելու, դրանք մեր ուսին դրած մինչեւ Գողգոթա բարձրանալու եւ այնտեղ այդ դժվարությունները, բոլոր ծանր իրավիճակները խաչափայտին գամելու հնարավորություն:

Երկրորդ՝ խաչը մեր «ես»-ի գաղափարով լցված կյանքը փոխում է «մենք»-ի եւ «դուք»-ի կյանքի: Հաճախ տրտմում ենք, որովհետեւ «ես»-ը չի բավարարվել, չի ստացել իր խնդրած այս կամ այն բանը, որովհետեւ «ես»-ը վիրավորվել է: Սակայն խաչը հուշում է՝ «ես»-ից բացի, կա նաեւ մեկ այլ իրողություն, որ կանգնած է մեր կողքին, ապրում է մեզ հետ, կիսում է մեր սեղանը, մեր երկիրը, Եկեղեցին: Խաչը մեզ պատգամում է, որ եսակենտրոն, անձնակենտրոն կյանքից բացի, կա նաեւ այլակենտրոն՝

ուրիշին՝ մերձավորին սիրելու, նրա համար մինչեւ մահ պայքարելու եւ կյանքն անգամ տալու իրողություն: Վավերական չէ այն սերը, որ պատրաստ չէ զոհաբերելու, վավերական չէ նաեւ խաչի այն պաշտամունքը, որ միայն դիտում է խաչի հրաշագործ զորությունը՝ առանց ընկալելու զոհաբերության իրական արժեքը:

Ի վերջո՝ խաչը մեզ համար իսկական հրաշք է, խորհուրդ, որովհետեւ մեզ, որ շատ հաճախ կենցաղային, երկրորդական խնդիրներով ենք զբաղված ու մեր ամբողջ օրը, կյանքը վերածում ենք անշունչ առարկաների, կարող է դարձնել եւ ըստ էության դարձնում է սիրո ու փրկության գործիք ուրիշների համար: Պատկերացրեք, մի պահ ձեր մտքում վերարտադրեք Գողգոթայի այդ պահը. երեք խաչեր գամված են կառափնարանի նշանավոր վայրում, հավաքված է ժողովուրդ, որը կարծում է, թե արդարացի է խաչել երկնավոր Վարդապետին՝ Հիսուս Քրիստոսին, Նրան, Ով շրջեց ամբողջ Հրեաստանով, համբուրեց բորոտների եւ քաղցածների ոտքերն ու ձեռքերը, արտասվեց Ղազարոսի՝ Իր մեռած բարեկամի գերեզմանի առջեւ՝ արցունքներով ցողելով մարդուն գերեվարած մահվան շղթաները... Եվ ահա այս մարդուն՝ Աստվածորդուն, ամբոխը խաչեց, որովհետեւ չէր կամենում հասկանալ, որ Նրա քարոզով մարդը եւ հասարակությունը կարող են դառնալ սիրո ու փրկության գործիք: Իր խաչելությամբ եւ հարությամբ Քրիստոս տալիս է մեզ այդ հնարավորությունը. միմյանց սիրելու, միմյանց փրկության համար ջանալու եւ ապրելու հնարավորությո՛ւնն է տալիս:

Խաչն իր թեւերն է բացել մեր առջեւ՝ իր խորհրդով լուսավորելով գեղեցիկ այս օրը: Եկեք միասին մի պահ խորհրդածենք քրիստոնեական մեծագույն նշանի՝ զոհաբերության, սիրո եւ փրկության բանալու մասին, որը, եթե նրան ճիշտ մոտենանք, կարող է մեր առջեւ բացել Աստծո արքայության գաղտնիքների դռները: Եկեք միասին աղոթենք, սիրելինե՛ր, որ խաչը մեզ համար դառնա սիրո եւ զոհաբերության օրինակ, փրկագործության ու մեր կյանքը սիրո լույսի տակ ապրելու բանալի եւ գործիք:

Շնորհք Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեսեանդ. ամէն: